

**ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ
ՈՒՆԵՑՈՂ ԳԵՎՈՐԳ ՄԿՐՏԻՉԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ ԵՎ
ՀԱՅԿ ԱՐՄԵՆԻ ՄԵԼԻՔՅԱՆԻՆ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ
ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2019
ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ
ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

----- 2019 թ. № ----- -Ա

ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ
ԳԵՎՈՐԳ ՄԿՐՏԻՉԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ ԵՎ ՀԱՅԿ ԱՐՄԵՆԻ ՄԵԼԻՔՅԱՆԻՆ
ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասի,

Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի № 450-Ն որոշմամբ սահմանված կարգի 5-րդ կետի 1-ին ենթակետի և 6-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2019 թվականի ամառային զորակոչից մինչև 2023 թվականի ամառային զորակոչը տարկետում տալ Գևորգ Մկրտիչի Սուքիասյանին (ծնված՝ 2001 թվականի մայիսի 30-ին, բնակության վայրը՝ Կոտայքի մարզ, գյուղ Աղավնաձոր, 3-րդ փող., 11-րդ փկղ., տ. 1, Հրազդանի 24) և Հայկ Արմենի Մելիքյանին (ծնված՝ 1999 թվականի մարտի 24-ին, բնակության վայրը՝ ք. Գավառ, Գ. Միքայելյան փող., 4-րդ նրբ., 3-րդ փկղ., տ. 8, Գավառի 24):